Պարույր Սևակ

Ողբում եմ

Ողբամ վաղամեռ մինուճար որդուն,
Առավել՝ նրա խեղճ մորը տրտում,
Եվ որդեկորույս մորից առավել՝
Վա՜յ տամ ու ողբամ այն թշվառ մարդուն,
Որ հավա՛տ ուներ - և ծովածավա՜լ,
Եվ հիմա չունի՛,
Մի՜ կաթիլ չունի...
Ստիպողական ժպիտը ողբամ,
Հարգանքը ողբամ, թե հարկադիր է,
Թե աղբյուրի պես սրտից չի բխում,
Այլ լիմոնի պես քամվում է վախից...
Եվ դողը ողբամ,
Եթե չի ծնվում նա ակնածանքից
Եվ կամ թե սրտում այն դեռահասի,
Որ իր կյանքի մեջ առաջի՛ն անգամ
Ծրար է բացում՝
Սիրային նամա՜կ:
Ա՛յն դողը ողբամ,
Որ զոռով-շառով որդեգրվում է,
Եվ կնքահայր է դառնում Երկյուղը,
Եվ կնքամայր է դառնում Սարսափը...

Քե՛զ ողբամ, աստվա՛ծ,
Եթե սուտ ես դու:
Ողբամ, սո՛ւտ, և քե՛զ,
Եթե քո հագին
Դու ճշմարտության քղամիդ ունես.
Եվ քե՛զ, քղամի՛դ,
Թե ուս ես ծածկում և ոչ թե քամակ...
Հիասթափությո՛ւն, քե՛զ ողբամ նաև,
Եթե գալիս ես և էլ չես գնում,
Ինչպես չի գնում հյուրը աներես:
Ողբամ և հյուրին, որ տանն օտարի
Իրեն պահում է տանտիրոջ նման,
Եվ տանտիրոջը՝ թե չի վռընդում,
Նրան թողնում է կնոջ հետ մենակ,
Աչքը դո՛ւրս կնոջ,
Որ շատ է սիրում արցունքով զինվել:
Արցունքն էլ ողբամ,
Եթե արցունքը՝ ցավը մեղմելով՝
Եվ քենն է փոխում հնազանդության.
Թող քենը գործե՛ր...
Վայ տամ ա՛յն գանգին,
Ուր ձմեռում է խելքը՝ արջի պես.
Նաև ա՛յն գանգին,
Որ ուսին դրված կաղամբ է ասես,
Եվ այդ կաղամբը այնտեղ է հասել,
Որ՝ օգտվելով նմանությունից՝
Իրեն վիթխարի վարդ է հոչակում
Ու դեռ սոխա՛կ է պահանջում նաև,
Եվ հարցնող չկա,
Թե ո՞ւր է գույնդ,

Բուրմո՞ւնքդ ուր է...
Ճիշտ այսպես՝
Նաև վայ տամ տականքի՛ն,
Որ իրեն յուղից թանկ է համարում
Լոկ այն պատճառով,
Որ... ծանր է յուղից.
Ա՛յն արձագանքին,
Որ հոգնած «մեռա»-ն
Դարձնում է «ուռռա՛»...
Ճիշտ այսպես՝
Պիտի այն ցա՛նկը ողբամ,
Որ միայն ինքն է մնացել գրքից.
Այն վա՛նքը ողբամ,
Որ վեր է ածվել բողկի պահեստի.
Այն վա՛նկը ողբամ, այն վա՛նկը, որին
Զրկում են միա՛կ իր ձայնավորից.
Նաև հավանգը,
Թե հավանգի մեջ լոկ ջուր են ծեծում.
Նաև սահանքը,
Եթե սահանքը... խելագարվել է՝
Բռնել է գրազ
Նույնիսկ ձկներին խեղդամահ անել,
Բռնել է գրազ
Եվ մտադիր է գրազը տանե՛լ...
Եվ ողբամ նաև...
Ինքս ի՛նձ ողբամ,
Թե այսպես պիտի ողբամ - վայ կանչեմ
Եվ իզուր տեղը ինքս ինձ տանջեմ...

03.VI.1957թ.

Մոսկվա